



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ

Հ Ր Ա Մ Ա Ն Ը

02.08.2012 թվականի N...62-Ն

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐՔԻՆ
ԱՌԻԴԻՏԻ ԿՈՄԻՏԵ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ 08.06.2012թ N 38-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 18-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2012 թվականի հունիսի 8-ի ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունում ներքին աուդիտի կոմիտե ձևավորելու մասին» N 38-Ա հրամանով հաստատված հավելված 1-ի 16-րդ կետի.

1. 1-ին ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

<<1) ներքին աուդիտի բաժնի պետի կողմից ներկայացված ներքին աուդիտի կանոնակարգի և դրանում կատարված փոփոխությունների քննարկում և դրա արդյունքների հիման վրա համաձայնության տրամադրում:>>:

2. 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

<<2) ներքին աուդիտի բաժնի պետի կողմից հաստատված ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերի ու դրանց փոփոխությունների նախագծերի քննարկում:>>:


3. 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

<<3) ընդհանուր հսկողության միջավայրի ստուգաթերթի քննարկում և լրացում:>>:

4. 6-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 7-րդ և 8-րդ ենթակետեր՝

<<7) Նախարարի կողմից կոմիտեի համաձայնեցմանը ներկայացված ներքին աուդիտի ստորաբաժանման յուրաքանչյուր տարվա ընտրանքային չափորոշիչների քանակի և կազմի քննարկում:>>:

<<8) Նախախարարության ներքին աուդիտի բաժնի գործունեության նկատմամբ հսկողության իրականացում, ինչպես նաև ներքին աուդիտի բաժնի և այլ ստորաբաժանումների փոխհարաբերությունների կորդինացում արտաքին աուդիտորների հետ:>>:



Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ